ՍՕՆԷՏ

ԱՐՄԻԻԵԱՆԻ

Թող քեզ ճոխ կեանքի հպարտ զաւակներ
Ծաղրեն կուրօրէն, նազելի՛ ընկեր,
Որ դու այդ շքեղ քո փարթամ կեանքում
Միայն իմ անզարդ երգն ես դու սիրում։

Թող սէրն անարդող մարդիկ անզգայ
Քեզ կոչեն՝ «անփորձ, անմիտ երեխայ»
Եւ մատաղ սրտիդ թախիծն ու հրճւանք
Համարեն հիւանդ հոգու զառանցանք։

Անվերջ չէ փայլը շըլացնող ոսկու,
Վաղ-ուշ սև ժանգն է նոքան պատելու.
Բայց անշահ սէրը, որպէս վառ արև,
Պայծառ կը շողայ անվերջ, յարատև։

Եւ քո անունը, մանո՛ւկ աննման,
Իմ պարզ երգերում կ՚ապրէ յաւիտեան։

3 դեկտեմբերի, 1886 թ.